ՍՏԵՓԱՆ ՊԱԼԱՍԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Պատմաբան, բանագետ, գրականագետ, լեզվաբան, հրապարակախոս և մանկավարժ Ստեփան Պալասանյանը ծնվել է 1837 թ. Ռումինիայի Բոտոշան քաղաքում. մահացել է 1889 թ. Էջմիածնում: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում: 1852–1855 թթ. Պալասանյանը սովորում է Փարիզի Մուրադյան վարժարանում, ուր աշակերտում է Գաբրիել Այվազովսկուն, Խորեն Գալֆայանին (Նար Պեյ), Սարգիս Թեոդորյանին, այնուհետև ուսումը շարունակում վերջիններիս կողմից հիմնված Հայկազյան վարժարանում, որն ավարտելուց հետո վերադառնում է ծննդավայր: 1858 թ. Թեոդոսիայի նորաբաց Խալիբյան ուսումնարանի հիմնադիր Գաբրիել Այվազովսկու հրավերով նա ուսուցչական պաշտոն է վարում այդ դպրոցում: Նոր Նախիջևանի խալիբյան-հայրապետյան խմբակցությունների վեճի ժամանակ պաշտպանում է հայրապետյաններին, գժտվում Այվազովսկու հետ և 1861 թ. պաշտոնակից ուսուցիչների հետ մեկնում Նոր Նախիջևան, հիմնում դպրոց: Այդ շրջանում Պալասանյանը պարապում էր նաև գրականությամբ ու հոդվածներ էր տպագրում «Մասյաց աղավնի» պարբերականում: 1863 թ. Գ. Այվազովսկու ամբաստանությամբ նա արտաքսվում է Նոր Նախիջևանից, որից հետո ուսուցչի պաշտոն է վարում Ներսիսյան դպրոցում: Որոշ ժամանակ անց, Պետրոս Սիմոնյանի միջնորդությամբ Պալասանյանը դիմում է Քերովբե Պատկանյանին Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժնում քննություն հանձնելու, սակայն պատասխան է ստանում, որ համալսարան ընդունվելու համար պետք է ունենա գիմնազիայի ավարտական վկայական: Իր բարեկամ Խանժինի օգնությամբ, որն այդ պահին տեղի առաջին գիմնազիայի տեսուչն էր, Պալասանյանը քննություն է հանձնում և ձեռք բերում ավարտական վկայական: Բայց դրանից հետո նա թողնում է սովորելու համար մայրաքաղաք մեկնելու միտքը:

1863–1881 թթ. Ստ. Պալասանյանը Ներսիսյան դպրոցում դասավանդում է հայոց լեզու, հայոց և ընդհանուր պատմություն, ֆրանսերեն: Նա դասավանդել է նաև Թիֆլիսի ռեալական դպրոցում: Մի խումբ հայ մտավորականների հետ Պալասանյանը 1869 թ. Թիֆլիսում հիմնում է Գայանյան օրիորդաց դպրոցը և դառնում նրա առաջին մանկավարժներից:

Գևորգ Դ կաթողիկոսի հրավերով Պալասանյանը 1881 թ. աշնանը տեղափոխվում է Էջմիածին՝ ճեմարանում հայոց պատմություն և ֆրանսերեն դասավանդելու: Այստեղ մանկավարժի իր սիրելի գործը նա շարունակեց մինչև կյանքի վերջը:

Ստ. Պալասանյանը ազգային և հանրային խնդիրների վերաբերյալ հրապարակախոսական հոդվածներ է գրել ժամանակի օրաթերթերում ու հանդեսներում: Նա թղթակցել է «Կռունկ», «Մեղու Հայաստանի», «Մշակ», «Փորձ», «Արձագ» և այլ պարբերականների: 1872–1875 թթ. խմբագրել «Մշակի» բանասիրական բաժինը: Նրա մատենախոսական հոդվածներն ամենից շատ լույս տեսան Աբ. Հովհաննիսյանի խմբագրած «Փորձ» հանդեսում, որի փակվելուց հետո Պալասանյանը շատ քիչ էր գրում: Նրա վերջին հոդվածները լույս տեսան «Վարուժան» և «Արարատ» ամսաթերթերում: Հպանցիկ նշենք, որ դյուրին չէ գերագնահատել նրա հրապարակումների դերը «Փորձի» գիտական կշիռը բարձրացնելու գործում: Հանձին «Փորձի», Ստ. Պալասանյանը, Ալ. Երիցյանը, խմբագիր Աբ. Հովհաննիսյանը ստեղծել են հայ առաջին գիտական լավագույն հանդեսի օրինակելի տեսակը: Հանդեսի հրատարակության առաջին տարվանից մինչև փակվելը գրաքննադատական բաժնի և՛ տեսական ծավալուն հոդվածները, և՛ գրախոսությունները գրում էր Ստ. Պալասանյանը՝ «Գրիչ» գրական կեղծանունով: Բացի կեղծանունով տպագրած գրաքննադատականներից, նա իր ստորագրությամբ հրապարակել է բազում հոդվածներ: Դրանցից հիշատակության արժանի են «Հայոց մտավոր շարժողությունը Ե դարում», «Տասնիններորդ դարու նշանաբանը», «Ազգերի զարգացման օրենքները», «Ազգային պատմության նշանակությունը», «Ազգային կրթությունը ԺԹ դարում», «Թե ինչ վիճակի մեջ է հայկական գրականության պատմությունը», «Եվրոպացոց վաճառականությունը Կիլիկիայի հետ» և այլն: Այս հոդվածները, զուտ պատմաքննական նշանակություն ունենալու հետ մեկտեղ, անպայմանորեն առնչվում էին և ժամանակի իրադարձություններին, մի հայտնի չափով օժանդակում, օգնում հասկանալու ազգի առջև արդիականության առաջադրած հարցադրումները:

Ստ. Պալասանյանը XIX դ. 40–60-ական թվականների ռուսական դասական գեղագիտական դպրոցից և հայ 60-ականներից ժառանգած գեղագիտական տեսության հենքի վրա ժամանակի մամուլի (մասնավորապես «Փորձ» հանդեսի) էջերում բարձրացրել է հայ քննադատական մտքի ուրույն իր շենքը: Հոդվածներում նա արծարծել է հայ մտավոր կյանքի, գրականության զարգացման հետ առնչվող անհետաձգելի հիմնահարցեր, առաջարկել գրականագիտության, պատմագիտության զարգացման հեռանկարային լուծումներ: Լինելով 1870-ական թվականների առաջատար քննադատներից մեկը, Պալասանյանն իր հոդվածները տոգորել է հայ գրաքննադատական մտքի զարգացման հոգածությամբ, ձգտել է հասնել նրան, որ գրական քննադատությունը կարողանա ընթերցողներին բարձրացնել գրական երկերը մինչև վերջ հասկանալու մակարդակին: Նա գրաքննադատական հոդվածները դարձնում էր միջոց՝ արծարծելու ազգային-քաղաքական հրատապ խնդիրները: Այսպես, օրինակ, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին գրելով Մկրտիչ Խրիմյանի «Վանգույժ» և «Դրախտի ընտանիք» բանաստեղծությունների գրախոսությունները, Պալասանյանը բնագրից կատարված ծավալուն մեջբերումներով արևմտահայության անուղղակիորեն գործուն պայքարի էր մղում թուրքական բռնատիրության դեմ: Հրապարակախոսը նույն նպատակն է հետամտել նաև Վահան Պար-

տիզակցու «Խոսք զհայրենեաց» գրքի մասին գրախոսությունում, որը հայության կողմից իր «մարդկային և ազգային իրավունքները» պաշտպանելու մի յուրօրինակ առաջադրություն է: Այս դիտակետից չափազանց ուշագրավ է Ծերենցի «Թորոս Լևոնի» վեպի մասին գրած Պալասանյանի գրախոսությունը, ուր օգնում է ընթերցողին անշեղ ընկալելու վեպի բուն ոգու արդիական նշանակությունը: Ծերենցի նպատակն է եղել, գրել է Պալասանյանը, «ներկա տառապալից ժամանակում» ցույց տալ, «թե ինչպես անցյալի համանման պարագաներում Թորոսի հայրենասեր ու անվեհեր հոգին հայ ժողովրդին կորստյան անդունդից ազատեց և վերակենդանության կանչեց»: Ծերենցը ցույց է տվել, «թե ինչպես մի ափ ժողովուրդ կարող է յուր ընկած տեղից բարձրանալ, որպես հրաշքներ կարող է գործել նա, եթե միայն կամք և հոժարություն ունենա Թորոսների ձայնը լսելու, նոցա գեղեցիկ օրինակին հետևելու»[1]:

Ստ. Պալասանյանին առավել շատ հետաքրքրել են պատմագիտության առաջընթացի հարցերը և, ըստ ամենայնի, ջանացել է նշել այն հիմնական տեսանկյունները, որոնք պետք է տեղ գտնեին պատմագրության հիմքում:

Ողջունելով Կարապետ Կոստանյանի «Հյուսվածք բանից» գրքի հրատարակությունը, որը ներկայացնում էր մարգպանության շրջանից մինչև արաբական արշավանքներն ընկած ժամանակաշրջանի հայոց երկրի կացությունը, Պալասանյանը պահանջում է ստեղծել ոչ թե զուտ նկարագրական, այլ քննական, գիտական պատմագրություն: «Անկարելի է պատմություն անվանել այն գրվածքները,– գրել է Պալասանյանը,– ուր կյանքի նշանավոր և աննշան իրողությունները խառնիխուռն կուտակվում են միմյանց վրա, առանց նոցա սկզբնապատճառն ու հետևանքները քննության տակ ձգելու»[2]: Գիտական չեն կարող լինել այն պատմությունները, որոնցում խոսվում են միայն թագավորների գործողությունների ու պատերազմների մասին, բայց մոռացության են մատնվում ժողովրդի սոցիալ-տնտեսական ու բարոյական կյանքի գործընթացները: Պատմությունը պետք է օգնի հասկանալու ազգի անցյալ կյանքի համայնապատկերը և ներկայի մեջ ցույց տա գալիքի ուրվագծերը: Պատմագիտությանը ներկայացվող այս պահանջներն էլ ավելի ամբողջական ձևակերպում են ստանում Ստ. Պալասանյանի «Ազգային պատմության նշանակությունը» հոդվածում, ուր քննադատվում էր մանկավարժ, հասարակական գործիչ Գևորգ Աբովյանի «Համառոտություն հայոց ազգի պատմության» աշխատությունը: Այս հոդվածում նա ներկայացնում է ոչ միայն Գ. Աբովյանի, այլև «Հայոց պատմության» մի շարք ձեռնարկների գիտական տեսությունը, կատարում ծրագրային հարցադրումներ: Պատմագիտության համար Պալասանյանն անընդունելի է համարում ինչպես ազգային սնապարծության երանգները, այնպես էլ ողբասացությունը: Ազգային պատմության ամենաէական կողմը նա համարում է նրա կենսունակության հիմքը, ժողովրդի ապրելու, ստեղծագործելու, լավատեսության կարողությունը: Հայոց պատմության համար այս իմաստով Պալասանյանը բնորոշ է համարում ոչ այնքան թագավորների հաղթական պատերազմները, որքան Մես-

[1] *«Փորձ», 1879, № 2, էջ 236:*

[2] *«Փորձ», 1877–1878, № 2, էջ 304:*

րոպ Մաշտոցի լուսավորական գործունեության պատմական խոշոր նշանակությունը: Նա անիմաստ է համարում և հայերի թշվառության նկարագրության օրինակները: Պատմաբանը պետք է կարողանա վեր հանել ժողովրդի բարոյական զորության գաղտնիքը, որի շնորհիվ թշվառությունների և հալածանքների մեջ ազգը կարողանում է պահպանել իր ինքնուրույնությունը: Պատմագրողը պետք է ժողովրդին կատարյալ հավատ ներշնչի վաղվա օրվա նկատմամբ: Նրա կարծիքով՝ «այս անելով ավելի մոտ կլինիք ճշմարտության, և ավելի շուտ կհասնիք ձեր նպատակին, քան թե անդադար խլացնեք մեր ականջները անցյալ փառքերի երեխայական պարծանքներով, կամ եթե չարագուշակ բուի պես շարունակ ողբաք ներկայի ավերակների վրա»[3]:

Ազատագրական շարժումներով հարուստ XIX դարը, ըստ Պալասանյանի, պետք է գործունեության առաջնթացի մղի բոլոր ճնշված ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին: Նա պետք է ոգեկոչվի իր ազատագրական պ այքարի անցյալ դրվագներով, մտնի գործուն գոյապայքարի դաշտ, ջանա համաշխարհային ասպարեզ դուրս բերել իր ազատասիրության և հոգևոր մշակույթի նվաճումները, քաջալերվի անցյալի արժանահիշատակ դասերով՝ հանուն արժանապատիվ գալիքի: «Հունաստանի անկախությունը» խորագրով հոդվածի առաջաբանում Ստ. Պալասանյանը գրել է. «Ոչինչ այնպես հետաքրքրական, այնպես խրատական չէ կարող լինել, որքան ներկա դարու ընթացքում զանազան մեծ ու փոքր ազգությունների գործ դրած հերոսական ջանքերը քաղաքական անկախությունը ձեռք բերելու: Հունաստանը, Դանուբյան իշխանությունները, սլավոնական փոքրիկ իշխանությունները,– Մոնտոնեգրոն և Սերբիան, Հունգարիան, վերջապես Իտալիան և Գերմանիան, յուրաքանչյուրը յուր ազգային ոգու և շրջապատող հանգամանքների համեմատ, զանազան միջոցներ են գործ դրել, այլևայլ ճանապարհներով են ընթացել, իրանց դարևոր ցանկություններին հասնելու: Բայց նոցա բոլորի նպատակը միևնույնն էր – ազատվիլ օտարական իշխանություններից և մի քաղաքական ու ազգային մարմին կազմել: Ցույց տալ այդ ազգերի մտավոր ու բարոյական գործունեությունը, ցույց տալ, թե որքան հաստատամտություն, որպիսի անխոնջ և շարունակ աշխատություն են գործ դրել նոքա իրանց բաղձանքին հասնելու, մի քաղցր պարտավորություն է համարում յուր համար մեր հանդեսը»[4]: Այս առաջաբանից հետո, պատմաբանը Հունաստանի XIX դ. առաջին կեսի պատմությունից առանձնացնում է այն դրվագները, որոնք ուսանելի պիտի լինեին հայերի համար: Ազատագրական պայքարի հույն առաջնորդները հրատարակում են հին հունական հեղինակներին, ծավալում ժողովրդի ազգային ոգու բարձրացմանը նպատակամիտված բուռն գործունեություն, գործող դպրոցները դարձնում են ազգային–քաղաքական դաստիարակության օջախներ, որտեղ «բոլոր դասատվության և ուսումնառության մեջ թագավորում էր այն գաղափարը, թե պետք է խորտակել մահմեդական լուծը»[5]: Վերջում ամփոփելով իր խոսքը, նա հայությանը հուշում է,

---

[3] *«Փորձ», 1877–1878, № 3, էջ 308:*

[4] *«Փորձ», 1877–1878, № 2, էջ 163:*

[5] *Նույն տեղում, էջ 189–190:*

որ «հույն ժողովուրդը յուր երկարատև և փառավոր կռվով ցույց տվեց, թե արժանի է այն անկախության, որի համար նա զենք էր բարձրացրել»[6]: Ի գիտություն ընդունելով այն իրողությունը, որ եվրոպական մի շարք ժողովուրդներ ըմբոստանալով իշխող ազգերի դեմ, պայքարի իրենց փորձով ապացուցել են ժողովուրդների իրավահավասարության անհրաժեշտությունը, նրանց սովորությունների, իրավունքների հարգումը, Պալասանյանը հաստատում է, որ «այս գաղափարի հաղթանակը մենք տեսնում ենք Հունաստանի անկախության, Հունգարիայի ինքնավարության և Իտալիայի ու Գերմանիայի միության մեջ: Այսօր իսկ մեր աչքերի առաջ նույն գաղափարը իրագործելու են ձգտում արևելյան քրիստոնյաները»[7]:

Ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմի ընթացքում Պալասանյանը հավատով էր նայում Ռուսաստանի հաղթանակին և արևմտահայության ապագային, քանզի տակավին շարունակում էր հավատալ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ ռուս ցարերի «քրիստոնեասիրությանն» ու «անկեղծությանը»: Սակայն պատերազմը չլուծեց արևմտահայության հարցը: Ի՞նչ անել հարցին Պալասանյանը չտվեց ուղղակի պատասխան: Սակայն դյուրին է նկատել, որ պատերազմից հետո նրա պահանջը հանգում է հետևյալին՝ հավաքական հայությունը «մի քաղաքական և ազգային մարմին կազմելու» համար միջոցների խտրություն չպետք է դնի: Նա ուրիշ ճանապարհ չէր տեսնում: Իրադարձությունները Բեռլինի կոնգրեսից հետո Արևմտյան Հայաստանում շիկանում էին, և միջազգային դիվանագիտությունը հեռու էր վճռական քայլեր ձեռնարկելուց: Պատմաքննական հայացքով մերձենալով Հայկական հարցին, Պալասանյանը նրա վճռման ելքն արդեն տեսնում էր ժողովրդի հոգևոր և ֆիզիկական ուժերի համախմբման, ազգային-ազատագրական պայքարի միասնական ճակատի հարդարման մեջ: Հետպատերազմյան ժամանակաշրջանում ստեղծված ծանր կացությունում, երբ արևմտահայությունը կրկին հակվել էր արտագաղթի, նա հանդես եկավ «Գաղթականության խնդիրը» հոդվածով, ուր խիստ զգուշացրեց իր հայրենակիցներին այդ ձեռնարկի ազգակործան հետևանքից: Հոդվածի սկզբում Պալասանյանը խոսում է գերմանացի մեծ բանաստեղծ, դրամատուրգ, գեղագետ և պատմաբան Յոհան Քրիստոֆ Շիլլերի բերանով.

…Ո՛հ, պինդ ամրացրու
Ազգության կապը, սիրով միացիր
Մեր սուրբ, թանգագին հայրենիքի հետ.
Նրա մեջ հաստատված են քո զորության
Պինդ արմատները: Նրանից հեռու,
Օտար աշխարհում կլինես մենակ
Եվ անօգնական ինչպես թույլ եղեգն,
Որին կկոտրե ամեն փոթորիկ[8]:

---

[6] *Նույն տեղում, էջ 218:*
[7] *«Փորձ», 1877–1878, № 1, էջ 143:*
[8] *«Փորձ», 1877–1878, № 4, էջ 149:*

Այնուհետև հիշեցնելով հայոց պատմության ընթացքում տեղի ունեցած բազում գաղթականություններն ու դրանց ողբերգական հետևանքները, նա սրտի ցավով հարցնում է. «ու՞ր եք կամենում գաղթել, որտե՞ղ հույս ունեք գտնել տնտեսական և բարոյական ապահովություն, մի՞թե անցյալի օրինակները ձեր աչքերի առաջ չեն, ու՞ր են Իտալիայի և Լեհաստանի հայ գաղթականները…Չէ՛, պանդուխտ հայ, բավ է որքան քո պապերը թափառեցին օտար երկինքների տակ: Բավ է, մեծ հանցանք կլինի քո կողմից և մեծ ապերախտություն հայրենիքի դեմ, եթե պանդուխտությունդ շարունակես այսօր…»[9]:

Ստ. Պալասանյանի հասարակագիտական հայացքները քննելիս անմիջապես աչքի է զարնում նույն առանձնահատկությունը, ինչ բնորոշ է նաև նրա պատմագիտական մեթոդաբանության համար, այն է՝ առաջընթացի հետևողականորեն անցկացվող սկզբունքը, հասարակական երևույթներն իրենց լինելիության մեջ վերլուծելու պատմականության դիտակետը: Նա երևույթի պատմականությունը չի պատկերացնում լինելիության զարգացման գործընթացից դուրս: «Պատմությունը,– գրել է նա,– աստիճանաբար զարգանում է, իբրև մի սերմ, որից կազմվում է արմատը, արմատից առաջ է գալիս ծառը իր ճյուղերով ու տերևներով»[10]: Մարդկային հասարակության պատմությունը, ինչպես և բնությունը, կանգ չի առնում իր սկզբնական գոյավիճակի փուլում: Պալասանյանը հատկապես կարևորում է երևույթների պատճառահետևանքային պայմանավորվածությունը: «Ազգերի պատմության մեջ,– շարունակում է նա,– չկա մի նշանավոր երևույթ, որ պատահական լինի և իր մեկնությունը չգտնի նախընթաց երևույթների մեջ»[11]: Պալասանյանն այս դիտակետից էլ քննում է հեռավոր և մերձավոր անցյալի բոլոր երևույթները: Այսպես. հին Հունաստանի հասարակական կյանքի «ներդաշնակ» զարգացումը նա քննում է Աթենքի պետական կառուցվածքի սկզբունքներով, որոնց հիմքը, պատմաբանի կարծիքով, անհատի նկատմամբ տածվող հարգանքն էր, ընդհանուր ժողովրդավարությունն ու գործերը վարելու հրապարակայնությունը[12]: Այս միտումը բացահայտ երևան է գալիս, երբ Պալասանյանը ջանում է բացահայտել հռոմեական հասարակության որոշ կողմերի զարգացման պատճառները: Նա հիմնավորում է, որ հռոմեական պետականության գերակա միտումը՝ արտաքին անսահմանափակ ռազմական ներխուժումների ձգտումը, բնորոշ է անտիկ պետության հասարակական կյանքի գրեթե բոլոր զարգացումներին: Այս գործընթացներից էլ պիտի, բնականաբար, բխեր հռոմեական գաղափարախոսության գործնականությունը, այդ գաղափարախոսության ենթարկումը պետականության կիրառման սկզբունքներին: Ստ. Պալասանյանը գերազանցապես դրանով է բացատրում այն իրողությունը, որ Հին Հունաստանի կողմից Հռոմին ժառանգություն թողնված իմաստասիրական բոլոր համակարգերից այդ երկրում առավել մեծ զար-

---

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ 200:*

[10] *Ս տ.Պ ա լ ա ս ա ն յ ա ն.Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս,1865, էջ13:*

[11] *«Փորձ», 1877–1878, № 2, էջ 298–299:*

[12] *Տե՛ս Ս տ. Պ ա լ ա ս ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 15:*

գացում գտավ հենց ստոիկյան իմաստասիրությունը, որն ավելի լիակատար և խորն էր համապատասխանում հռոմեական պետականության ոգուն:

Պատճառահետևանքային կապի ճանաչումը Պալասանյանի հասարակագիտական հայացքների շղթայի այն հենքն է, որի վրա խարսխվում է հնի ու նորի, հասարակական զարգացման նախընթաց և հաջորդ փուլերի կապը: Պատմության մեջ իշխող պատճառահետևանքային կապն ինքնին հանգեցնում է հասարակական երևույթների ներդաշնակության, ինչպես նաև՝ հակադրության օրինաչափ առկայությանը: Ազգերի և հասարակական զարգացման հիմնահարցերին նվիրված տեսական ծավալուն հոդվածներում, ինչպես նաև «Պատմություն հայոց գրականության» աշխատության մեջ, նա անցկացնում է նաև սոցիալական կյանքի գործընթացների օրինաչափության գաղափարը: Պալասանյանը չի տարակուսում, որ հասարակական կյանքը զարգանում է մարդկության պատմության մեջ գործող ընդհանուր օրինաչափությունների հենքի վրա: Ընդունելով, որ աշխարհի բոլոր ժողովուրդներն իրենց զարգացման մեջ անցել են սկզբնական, նախապատմական ժամանակաշրջանը, նա նկատում է. «Հայերը չէին կարող այս բանում մի բացառություն անել, որովհետև ազգերի զարգացման օրենքները ամեն տեղ միևնույնն են»[13]: Ըստ Պալասանյանի, հասարակական զարգացման օրենքը բացարձակ և ընդհանուր օրինաչափություն է, քանզի «Կյանքի մեջ բոլորովին անշարժ և անփոփոխ բան չկա ու չէ կարող լինել»[14], սակայն տարբեր ժողովուրդների հասարակական զարգացման տեմպը տարբեր է: Նա որոշակիորեն զարգացման տարբեր մակարդակ է տեսնում առանձին երկրներում: Կան ժողովուրդներ, որոնց զարգացման շարժընթացն այնքան դանդաղ է, որ առաջին հայացքից կարող է թվալ, թե այդ ժողովուրդների կացության մեջ ոչ մի փոփոխություն տեղի չի ունենում, բայց դա միայն մակերեսային, արտաքին ու խաբուսիկ տպավորություն է: Մետաֆիզիկական քարացածության գաղափարը խորթ է Պալասանյանին, քանզի «մի ժողովուրդ, որքան էլ խեղճ լինի, չի կարող բոլորովին անշարժության մեջ մնալ, որովհետև բոլորովին անշարժ միայն մեռած բանն է»[15]:

Ժողովուրդների պատմական առաջադիմության տարբեր ընթացքը Պալասանյանը բացատրում է յուրաքանչյուր ազգի առանձնահատուկ պայմաններով, պայմաններ, որոնցում ընթանում է նրա սոցիալ-տնտեսական կեցությունը: Դիտարկելով հայ ժողովրդի կեցությունը Եվրոպայի զարգացած ազգերի հետ, նա հայոց հետընթացը, ինչպես նաև վերջին դարերի ընթացքում եվրոպական ժողովուրդների աննախընթաց առաջընթացի պատճառները որոնում է պատմական այն իրավիճակների մեջ, որոնցում ապրել են այդ ժողովուրդները: Առաջընթացը հոչակելով հասարակության հիմնական ազդակ, Պալասանյանը միաժամանակ իդեալիստորեն է ընկալում առաջընթացն ապահովող շարժիչ ուժերի դերը: Առաջադիմության մոտիվները նա որոնում է գաղափարական գործոնների մեջ: Պալասանյանը պաշտպանում է այն տեսակետը, ըստ որի հասա-

[13] *Նույն տեղում, էջ 38–39:*
[14] *Նույն տեղում, էջ 96:*
[15] *Նույն տեղում, էջ 39:*

բական առաջադիմության աղբյուրը քաղաքական ազատությունն է, կարծիքների ազատ փոխանակությունը: «Առաջին անգամ անշարժությունը,– գրում է Պալասանյանը,– փոխվեցավ առաջադիմության այն ժողովուրդների մեջ, որոնց կառավարությունը ընդունում էր ազատ վիճաբանություն»[16]: Նկատենք նաև, որ այս տողերի հեղինակը հասարակական առաջընթացին նպաստող գործոնների շարքում, քաղաքական ազատության հետ, միաժամանակ դասում է առևտուրը և էմիգրացիան (վտարանդիությունը), բայց լոկ այն պատճառով, որ այդ երևույթները, նրա համոզմամբ, պայմաններ են ստեղծում գաղափարների ավելի լիակատար փոխհաղորդակցման համար, գաղափարներն ազատորեն մի երկրից մյուսը փոխադրելու համար: Դյուրին է նկատել, որ այս դեպքում էլ որպես հասարակական առաջընթացի շարժիչ ուժեր են ամենից առաջ հանդես գալիս գաղափարական գործոնները՝ վերջիններիս փոխադրումները տարածաշրջանից տարածաշրջան: Դժվար չէ տեսնել, որ հասարակական առաջընթացի հարցը քննելիս ցցուն կերպով մակերես է ելնում ոչ միայն Պալասանյանի հասարակագիտական հայացքների իդեալիստական ուղղվածությունը, այլ նաև՝ դասակարգային նեղմտությունը: Եվ դա ազգային պահպանողական հրապարակախոսի դիրքորոշումն էր, համոզմունքի դիրքորոշումը: Նա գտնում էր, որ հասարակությունը պետք է համախմբված լինի միասնական, մեծ գաղափարի շուրջը, այդ գաղափարի ներքո ակնհայտորեն հասկանալով հասարակության ազգապահպան անկյունաքարը[17]:

1877 թ. «Փորձ» հանդեսում տպագրած «Տասնիններորդ դարու նշանաբանը» հոդվածում, ինչպես նաև 1870–1880-ական թվականների մի շարք հրապարակումներում Պալասանյանը մարդկության զարգացման ընթացքի բացատրության մեջ գաղափարական գործոնների կողքին մասամբ տեղ է տալիս նաև քաղաքական և սոցիալական հանգամանքներին: Վերոհիշյալ հոդվածում նա գրում է, որ արտադրողական ուժերի զարգացումը, քաղաքակրթության անընդհատ առաջընթացը, ժողովուրդների շփումներն ավելի են մերձեցնում նրանց՝ հարկադրելով ակամա փոխառնել սովորույթներ ու բարքեր, բառեր և նույնիսկ ծեսեր: Եվ այս մերձեցումը կատարվում է ազգային առանձնահատկությունների կորստի հաշվին, որը և առիթ է տալիս կոսմոպոլիտներին մերժելու ազգայինը ու իրենց հռչակելու աշխարհաքաղաքացիներ: Մերժելով գիտությունից հեռու այս գռեհիկ տեսակետը, Պալասանյանը ցույց տվեց, որ դա հակադիր է քաղաքակրթության անկասելի ընթացքին, որ առաջընթացի գործընթացում յուրաքանչյուր ազգ ավելի ամուր է կառչում իր ազգային առանձնահատկություններին, իր գոյապայքարի գաղափարախոսությանը: Ազգային առանձնահատկության, ինքնուրույնության գաղափարը զուգահեռաբար զարգանում է ազգերի մերձեցման գաղափարի հետ, դրանք կարծես գոյություն ունեն որպես հակադրամիասնություն, մերձեցման ճանապարհին վերանալու վտանգն ստիպում է ավելի ամուր կառչել սեփականին: Պալասանյանը ազգության պահպանման համար նշում է մի շարք կարևոր գործոններ՝ նույնալեզու էթնոսի որոշակի քա-

[16] *«Փորձ», 1876, № 3, էջ 243:*

[17] *Տե՛ս նույն տեղում, էջ 255:*

նակ, որ կարողանա ընդդեմ գնալ թշնամուն, քաղաքական ազատություն և հոգևոր անկախություն: Վերջինս նա առավել առաջնային է համարում, քանզի հոգևոր անկախությունն է ապահովում ազգի ինքնուրույնությունն ու թույլ չի տալիս նրան ենթարկվելու օտար ժողովուրդների բարոյական ներգործությանը: Պալասանյանը հոգեկան ազատությունն առաջին հերթին տեսնում է սեփական պատմությունը, այսինքն՝ սեփական անցյալը ճիշտ արժևորելու և դրանից դասեր քաղելու կարողության մեջ: Նա կարևորում է նաև ազգային արժանիքի գործոնը: Ժողովուրդը պետք է ունենա ազգային հպարտություն:

Հայ ժողովուրդը մարդկության մի ճյուղն է և ենթակա է համաշխարհային պատմական զարգացման նույն տրամաբանությանը, նա անցել է պատմական առաջընթացի գրեթե նույն ուղիով, ինչպես և քաղաքակիրթ մյուս ազգերը: Ահա այսպիսի պատմաքննական ելակետով է առաջնորդվել Պալասանյանն իր պատմագիտական գլխավոր երկը լույս տեսնելուց ավելի քան մեկ տասնամյակ առաջ հրապարակած «Տասնիններորդ դարու նշանաբանը» ծրագրային հոդվածում:

Տնտեսակարգերի փոփոխման վերաբերյալ Ստ. Պալասանյանի հայացքների բնույթը ոչ պակաս բացահայտ է դրսևորվում, երբ նա քննում է մարդկային հասարակության առաջընթացի ձևերի հարցը: Հարկավ, նա առաջընթացը դիտում է որպես հակասությունների լուծում, բայց այնպիսի հակասությունների, որոնք չեն հանգում արյունոտ բախումների, որոնք լուծվում են հարթ, աստիճանական անցումով: Նման կերպ ծավալվող և առանց բախման իրականացվող անցումը, ըստ Պալասանյանի, հասարակական առաջընթացի հիմնական ու բնականոն եղանակն է: Ինքնին չափազանց բնորոշ է այն երկդիմի գնահատականը, որ նա տվել է ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությանը: Իբրև ազգային պահպանողական և լիբերալ միտումներով տոգորված լուսավորիչ, Պալասանյանը չէր կարող չնկատել այն հսկայական պոզիտիվ դերը, որ բուրժուական մեծ հեղափոխությունը խաղացել է հին տնտեսակարգի հիմքերը կործանելու գործում: Նա աներեր համոզված է, որ ֆրանսիական հեղափոխությունը փորձեց վերջ տալ ճնշման ու շահագործման ֆեոդալական ձևերին: «Ֆրանսիական հեղափոխությունը,– գրում է Պալասանյանը,– մարդկանց մեծագույն մասը փոքրագույն մասի դարևոր ճնշողությունից ու հարստահարությունից ազատելու մի նոր դարագլուխ բաց արավ մարդկության համար, հուսո և երջանկության դարագլուխ»[18]:

Ստ. Պալասանյանը չի ողջունում, սակայն, հեղափոխության վերջնական այն արդյունքը, երբ «ծնունդ տվավ մի անտանելի դիկտատորության, որ թեև կարճատև կյանք ունեցավ, այնուամենայնիվ մեծապես ծանրացավ ազգերի վերա»[19]: Արդեն XIX դ. 70-ական թվականներին, կապիտալիստական տեսակետից տակավին գրեթե չզարգացած Հայաստանի պայմաններում, նա տեսնում էր, որ հասարակական տարբեր դասակարգերի, իսկ առաջին հերթին հասարակական սանդուղքի հակադիր բևեռների վրա կանգնած դասակարգերի միջև

[18] *«Փորձ», 1879, № 2, էջ 130:*
[19] *Նույն տեղում:*

գոյացած խոր վիհը ոչ քիչ վտանգներ ունի երկրում բուրժուական կարգերի խաղաղ զարգացման համար: Պատմաբանը ըմբռնում էր, որ ժողովրդի ստորին խավերն այնքան էլ հակամետ չեն միավորվելու «ազգի երևելիների» հետ, որ նրանք պարզապես դիմադրում են շահագործման հենքի վրա ազգային համախմբման սկզբունքին: Պալասանյանը դառնությամբ նկատում է նաև, որ «որքան ավելի մեծ էին ընկերական դասակարգերի մեջ եղած տարբերությունները, այնքան ավելի սաստկությամբ դիմադրում էին նոքա ազգության սկզբունքին, և որքան ընկերական սանդուխքի աստիճանները միմյանցից հեռու էին կանգնած, այնքան ավելի թույլ կերպով էին շաղկապված միևնույն ազգի անդամները»[20]:

Ռուսական կայսրության անդրկովկասյան երկրամասի տնտեսական կենտրոններում հայ բուրժուազիայի և հայ բանվորության երևան գալը չէր կարող դուրս մնալ հասարակական կյանքի առաջընթացով շահագրգիռ Պալասանյանի մտավոր տեսադաշտից: Եվ ուշագրավն այն է, որ նա այդ երևույթների մեջ չէր ուզում տեսնել օրինաչափություն և հասարակությունը սոցիալական արմատական վերակառուցման ենթարկելու անհրաժեշտություն: Ընդհակառակը, նա որոնում էր ստեղծված կացությունից դուրս գալու ելք, առաջին բնագիծ մղելով ազգային միասնության և ինչ-որ ազգային ընդհանրության շրջանակներում հասարակության բոլոր խավերի խաղաղ համագործակցության գաղափարը: Նա անիրագործելի սոցիալական ուտոպիայի տարբերակներ էր որոնում հայոց պատմության մեջ, մինչդեռ հայ ժողովրդի պատմական անցյալը նման տարբերակներ չէր տալիս: Ուստի Պալասանյանը դարձյալ դիմում է Հին Հունաստանի պատմությանը: Եվ բացահայտ իդեալականացնելով հին հունական ստրկատիրական պետությունը, նա ջանում էր ապացուցել, որ Հին Հելլադան պետական ներդաշնակ կառուցվածքի հիանալի օրինակ է, որտեղ անհատի նկատմամբ տածվող հարգանքը, կառավարման ժողովրդավարությունը և գործավարության հրապարակայնությունը թույլ չէին տալիս, որ սոցիալական հակասություններ առաջանային: Պատմաբանին ա ռանձնապես հրապուրում, գրավում էր Հոմերոսի և Հեսիոդոսի դարաշրջանը, երբ Հունաստանի ժողովուրդն իբրև թե լիովին միաբան էր: Ըստ Պալասանյանի, հետագայում նս «պատմական ասպարեզում ոտք կոխելուց հետո էլ՝ Հունաց հասարակության մեջ բաժանում չընկավ, ինչպես որ պատահում է ուրիշ ազգերում, որովհետև հելլենական կրթությունն ու դաստիարակությունը իր առաջվա հրապարակական ձևը պահպանեց»[21]: Վերոհիշյալ մտքին, ավելի որոշակի և բացահայտ ձևով, նա անդրադառնում է «Փորձ» հանդեսում 1876 թ. տպագրված «Ազգերի զարգացման օրենքները» հոդվածում: Անկասկած, Պալասանյանի պատմական շեղահետախուզումները ազգային համախմբման շահախնդրության դրդումն էին կրում իրենց վրա՝ ոչ միայն ծառայելով XIX դ. երկրորդ կեսի կովկասահայ ազգային պահպանողականության գաղափարաբանությանը, այլևս հարստացնելով այդ գաղափարաբանությունը:

---

[20] *«Փորձ», 1877–1878, № 1, էջ 143:*

[21] *Ս տ. Պ ա լ ա ս ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 15:*

«Տասնիններորդ դարու նշանաբանը» հոդվածում նա հետևյալ կերպ է ձևակերպում ազգային-պահպանողական իր հայեցակետը. «Երկարատև ու ահագին փոթորիկները շատ դարերի ընթացքում խորտակեցին, ջղակտոր արին հայի նյութական և բարոյական զորությունները: Ասիական բարբարոսության տարրերը ամենահին ժամանակներից սկսած միաբանեցին սպանելու, բնաջինջ անելու այն ազգայնությունը, որ յուր հերոսական ջանքերով, յուր գեղեցիկ ընդունակություններով ցույց տվեց, թե ավելի լավ բախտի արժանի էր, քան ստրուկ լինել այն տիրապետողներին՝ որոնցից շատը իրանից ստոր էին և՛ իրանց ձգտումներով և՛ իրանց քաղաքակրթությամբ: Ուշ սթափեցավ հայն յուր բարոյական թմրությունից, և այս շատ բնական է. որքան հարվածները մեծ եղան, այնքան և մեռելությունը երկար պիտի տևեր: Հազիվ այս դարու սկզբներից ընկերությունների և մասնավոր անձանց ջանքերով, որոնց հետ միաբանեցավ և եվրոպական գիտությունը, սկսավ հետազոտվիլ հայոց հին կյանքը, մշակվեցավ հին լեզուն ու գրականությունը…Հայն իմացավ, թե յուր գոյությունը երեկվանից չի սկսվում, այլ ունեցավ մի փառավոր անցյալ, ունեցավ յուր Տիգրաններն ու Տրդատները, Վարդաններն ու Վահանները, Սմբատներն ու Լևոնները, Ներսեսներն ու Սահակները, որոնց մեծագործության հիշատակները ոչ միայն գրքերն են լցնում, այլև հայրենի երկրի բոլոր անկյունները ծածկում են: Հայն սկսավ զգալ, թե ինքն էլ ուրիշների պես մարդ է, թե ինքն էլ ուրիշ ազգերի պես գոյության իրավունք ունի, և թե պետք է պահպանե յուր ազգային առանձնությունները, յուր լեզուն, յուր կրոնը, յուր սովորությունները»[22]*: Այս ընդարձակ մեջբերման նպատակն է ցույց տալ, որ Պալասանյանի համար կարևորը ազգային ավանդույթի և ժառանգված արժեքները քննադատորեն ընկալելու մտահոգությունը չէ միայն, այլ դրանք ժողովելու, պահել-պահպանելու, վերակենդանացնելու և հավերժացնելու մտայնությունը: Եվ մտայնությունն այս առաջանում էր ազգային-պահպանողականների այն համոզումից, որ Ռուսաստանի կողմից Անդրկովկասի քաղաքական և տնտեսական նվաճումը, հայերի ցրված վիճակն արդի աշխարհում նրանց պիտի հրահանգեն կազմակերպված ինքնապահպանություն: Սրան էր հանգում նրա պատմափիլիսոփայության արդիական խորհուրդը: Եվ ոչ միայն Պալասանյանի: Այսպես էին մտածում նրա ժամանակակից գաղափարական համախոհներ Ալ. Երիցյանն ու Կ. Եզյանը, որոնք նույնպես կարծում էին, թե հայոց պատմության պարապ երեսներում պետք է գրվեն ազգի ընտանեկան կյանքը, ազգի երևելիների՝ պետական և զինվորական, հոգևոր ու մտավոր նշանավոր գործիչների առտնին կենցաղը և ոչ թե ազգային կյանքում հակադրություններ ծնող պատճառները:*

1890 թվականին, հետմահու, լույս է տեսնում Ստ. Պալասանյանի «Պատմություն հայոց» աշխատությունը՝ պատմաբանի գիտական լավագույն հուշարձաններից մեկը: Գիրքն ունեցել է մի քանի հրատարակություն, երկար ժամանակ ծառայել է որպես դասագիրք հայկական դպրոցներում: Աշխատության մեջ պատմության հարցերը քննվում են իրենց ծագման ու զարգացման գործընթացներում՝ չկտրվելով տնտեսական ու քաղաքական կյանքից, կարևորելով

[22] *«Փորձ», 1877, № 1, էջ 138–139:*

նան պատմության գաղափարաբանության հարցերը: Հատկապես ուշադրության են արժանի պատմական գործընթացների մակերեսային ընկալումից դրանց ներքին բովանդակության մեջ թափանցելու, եզակիի ճանաչումից դեպի ընդհանուրի բացահայտումը որոնելու պատմաբանի ձգտումը: Այստեղ առավել, քան հրապարակախոսության մեջ, նա անցյալի դեպքերին ու իրադարձություններին մերձենում է պատմականության դիրքերից: Ժամանակին մեծ համարում ունեցող իր այս աշխատությունում Պալասանյանը ազգային պահպանողականության դիրքերից բնութագրել է հայոց հին և միջնադարյան պատմության շրջադարձային փուլերը, նոր ժամանակաշրջանում հայերի նկատմամբ Ռուսական կայսրության վարած քաղաքականության ողջ գործընթացը: «Աչքի առաջ ունենալով յուր երկրի վաճառականության և արհեստների բարգավաճումը,– կարդում ենք գրքում,– և յուր ապագա աշխարհակալությունը Ասիայում, ռուս պետությունը… պաշտպան ու բարեկամ հանդիսացավ հայոց: Ռուսաց թագավորները մեծամեծ խոստումներ տվին հայոց, արտոնություններ շնորհեցին, աստիճաններ ու պատվանշաններ բաշխեցին, որպեսզի նոցա համակրանքը գրավեն»[23]: Եթե Ռուսաստանը չէր ուզում վերականգնել Հայաստանի առաջվա փառքը, ապա իր աջակցությամբ տեղի ունեցած զանգվածային հայրենադարձության շնորհիվ հնարավորություն տվեց կրկին «նորոգել» հայոց հայրենիքի մի հատվածը՝ Արևելյան Հայաստանը: «Եվ հիրավի,– շարունակում է Պալասանյանը,– հայերը իրանց նոր կացության մեջ կյանքի և ստացվածքի ապահովություն վայելելով, սկսան մեծ եռանդով վաճառականության ետևե լինել, որով Կովկասի առևտուրը կարճ միջոցում պայծառության հասավ: Նյութական ապահովությունը հայոց միջոց տվեց կրթության հոգ տանելու, և այս կողմից ռուսահայք ավելի առաջադիմություն արին, քան Թուրքիայի հայերը՝ իրենց կանոնավոր ուսումնարաններով: Տակավին ներկա դարի սկզբին դուրս եկան մի քանի ականավոր անձինք, որոնք իրանց առատաձեռնությունն ու ազդեցությունը գործ դրին Ռուսահայոց մտավոր և բարոյական կրթությունը հաստատ հիման վրա դնելու: Նախաձեռնությունը այս գեղեցիկ գործի մեջ պատկանում է Լազարյանց տոհմին և Ներսես Ե կաթողիկոսին»[24]:

Որպես ամփոփում կարող ենք ասել. Ստ. Պալասանյանը XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական ու պատմագիտական մտքի այն ներկայացուցիչներից էր, ով զգալի չափով ոչ միայն հաղթահարեց ավանդական պատմագրության սխեմատիզմը, այլև կարողացավ շրջադարձային շատ երևույթներ գնահատել իրօրյա առաջադիմության բարձրակետից: Կարևորելով հայերի պատմաքաղաքական ինքնագիտակցությունը և ջանալով այն ուղղել ամեն տեսակ բռնատիրությունների դեմ՝ նա ազգին զգաստության էր կոչում ամենից առաջ հետադիմության դեմ: Հայոց պատմության իրօրյա բարձունքից Ստ. Պալասանյանը ևս ծխում էր ազգային ռոմանտիզմի այն կնդրուկը, որով ազգային-պահպանողականները պատմության դասերի յուրացմամբ ու սրբագրմամբ տրամադիր էին մեծարել իրենց ուսանելի անցյալը:

---

[23] *Ս տ. Պ ա լ ա ս ա ն յ ա ն. Պատմություն հայոց, Թիֆլիս, 1902, էջ 482–483:*

[24] *Նույն տեղում, էջ 499–500:*

ИСТОРИКО-ПУБЛИЦИСТИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ СТЕПАНОСА ПАЛАСАНЯНА

НОРАЙР САРУХАНЯН

Р е з ю м е

Армянский историк, литературовед, языковед и публицист второй половины XIX в. Степанос Паласанян в своих публицистических статьях и монографиях обратился к неотложным вопросам интеллектуальной жизни, проблемам развития литературы и историографии, представил собственное видение состояния и развития общественно-политической жизни, культуры и историографии. Особенно его волновали обществоведческие и историографические вопросы национально-освободительных движений, он старался заложить основы тех принципов, которые должны были сыграть решающую роль в единении нации. В своих статьях, в том числе в таких, как «Законы развития наций», «Значение национальной истории», «О состоянии истории армянской литературы», «Независимость Греции» и монографиях – «История армянской литературы», «История Армении» – Паласанян рассматривал общественные процессы и уроки истории с позиций современной ему научной историографии. К политике царской России в отношении Армении Паласанян подходил с национально-консервативных позиций: хотя Россия и не воссоздала армянскую государственность, ее политика переселения армян в Восточную Армению позволила создать новый и крепкий национальный очаг для армян.

HISTORICAL AND PUBLICISTIC HERITAGE OF STEPANOS PALASANYAN

NORAYR SARUKHANYAN

S u m m a r y

Armenian historian, literary critic, linguist and publicist of the second half of the 19th century Stepanos Palasanyan in his publicistic articles and monographs turned to the actual problems of the intellectual and literature process and historiography, presented his own view on the condition and the perspectives of the historiography, culture and literature development. He was mostly interested in the social and historiographic aspects of the national-liberation movements: he was trying to develop the principles of the national unity. In his articles “Laws of the national development”, “The meaning of the national history”, “On the question of the current situation of the Armenian literature”, “Independence of Greece” and books “The history of the Armenian literature”, “The history of Armenia” Palasanyan studied the social processes and the lessons of the history from the modern scientific historiography’s positions. He used the national-conservative concepts for his own point of view over the Tsarist Russia’s policy on Armenia: though Russia didn’t re-create an independent Armenian state, its policy of resettlement of the Armenians let create a national center on the territory of the Eastern Armenia.